

• ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ԱԵՐԻԱ •

ԽԱԶԻԿ ԴԱՇՏԵՆՑ

Յ Ե Ր Գ Ե Ր Ի Գ Ի Ր Ք

• Դ Ե Տ Յ Ր Ա Տ •

891.99

Դ - 19.

19 NOV 2011

No 5

ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ՍԵՐԻԱ

01.99

0-19


հԱՅԻԿ ԴԱՇՏԵՆՑ

ՅԵՐԳԵՐԻ ԳԻՐՔ

I

մԵՏՐԱՍ

ՅԵՐԵԿԱՆ



\*\*\*

Ֆեզ ծեծեց կառավարիչը, չարտեց պատին,  
 Բռունցքով զարկեց ու տվեց քացի,  
 Դու լացով նայեցիր նրա ցուցամատին,  
 Ու կարոտ մնացիր մի կտոր հացի:

Յերբ գիշերն իջավ, գլուխդ դրկած,  
 Հենվեցիր մանկատան պատին ու լացիր,  
 Յեվ ծնկաչոք յեղար և մուխի մեջ անքուն  
 Մահճակալիդ ընկար ու հեծկլտացիր:

Յերազեցիր ինչքա՛ն, ինչքա՛ն բաներ,  
 Արևը թվաց քեզ մի բաժակ կաթ,  
 Լուսինը թվաց մի կտոր պանիր,  
 Ամպերը՝ քաթան, աստղերը՝ հեքյաթ...

Յերազեցիր մեջ կրակ փնտռեցիր,  
 Ու ամպերը դարձան քեզ համար շապիկ,  
 Ա՛խ, դու այնքա՛ն, այնքա՛ն մնացիր նոթի,  
 Ու գետնին զարկեցիր վռաքերդ բորեկ:

Իսկ հիմա արդեն մեծացել ես դու,  
 Յեվ կոմյերիտ ես արդեն հասուն,  
 Ճամբա յես ընկել խնդո՛ւն, խնդո՛ւն,  
 Յեվ արդեն յերգեր ես սիրով ասում:

Տե՛ս, ծիծաղում են տարիները քեզ,  
 Կացինը յենում ու իջնում ե պինդ,

Յեւ յերբդ, կանաչ բարդիններէ պեո  
Որորովո՛ւմ, ընկնո՛ւմ, փռւո՛ւմ են ճամբի՛դ :

Ո՛հ, յերգի՛ր, ընկե՛ր, յերգի՛ր արի  
Մեր կառուցումը, մեր հույզերը՝ ծով.  
Մեր դարը յերգի՛ր, յերգի՛ր ու քայլեր  
Որերիդ կանաչ անտառի միջով :

1930 թ.

Ն Ո Ր Յ Ե Ր Գ Ե Ր

(ԳԵՂՋԿԱԿԱՆ)

## ԳՆԱՆՔ ԱՐՏԸ ՄԻԱՍԻՆ

Գնանք արտը միասին, միասին, միասին,  
Բանենք, դատենք, աշխատենք միասին, միասին,  
Կոմյերիտ սիրուն աղջիկ, սև՝ աղջիկ, սև՝ աղջիկ  
Հանդը գնանք մութլուսին, մութլուսին, մութլուսին:

Խըչխըչում են արտերի, վարդերի ծովերը,  
Սըվսըվում են սարերի՛, դաշտերի՛ հովերը,  
Ու ամենքը միասին, միասին, միասին  
Փըսփըսում են նոր կյանքի աշխատանքն ու սերը:

Կոմյերիտ սիրուն աղջիկ, սև աղջիկ, սև աղջիկ  
Գնանք արտը մութլուսին, մութլուսին, մութլուսին,  
Բանենք, դատենք, աշխատենք, ջա՛ն աղջիկ, ջա՛ն  
աղջիկ,  
Ու հետ դառնանք միասին, միասին, միասին:

## ԿՈՄՍՈՍՈՒՆԵՐ ԵՆ ՅԵԿԵԼ

Ձյունը արցունք է թափում, ձյունը արցունք է  
 թափում,  
 Կոմյերիտներ են յեկեկ, մեր սարերն են չափում:

Ձափում են ու չեն հոգնում, յեկեկ են մեղ են ոգնում  
 Բարձր սներ են խփում, բարակ թելեր են կապում:

Ձյունը արցունք է թափում, ձյունը արցունք է  
 թափում,  
 Կոմյերիտներ են յեկեկ, մեր սարերն են չափում:

Փողոցը լույս են ցանում, ճրագը դուրս են անում,  
 Մեր գյուղերը լուսավոր ճամբի վրա յեն հանում:

Ձյունը արցունք է թափում, ձյունը արցունք է  
 թափում,  
 Կոմյերիտներ են յեկեկ, մեր սարերն են չափում:

Քաղաքի միջից են յեկեկ, մեր շեֆ բջից են յեկեկ,  
 Գարնան նման են յեկեկ, գարնան միջից են յեկեկ:

Ձյունը արցունք է թափում, ձյունը արցունք է  
 թափում,  
 Կոմյերիտներ են յեկեկ, մեր սարերն են չափում:

\*\*\*

Աղջի, Լուսիկ, դու'ւրս արի,  
 Տե'ս, արեւը լվացվել,  
 Շողք է զարկել սարերին,—  
 Ինչքա՞ն կակաչ է բացվել:

Տե'ս ի՞նչ սիրուն չաքքերով  
 Ավտոները վազում են,  
 Մեր սարերը խաղում են,  
 Մեր սարերին սաղում են:

Ավտոն սարից ցած դնաց,  
 Արաից թռան լորերը,  
 Կակաչները կարմրած,  
 Գլուխները կորորեն:

Աղջի, Լուսիկ, դու'ւրս արի,  
 Մեր սարերը նորեկ են,  
 Ավտոները գյուղ մտան,  
 Ձեն են տալիս ձորերը:

## ԱՂԶԻԿԸ

— Աղջիկ', եղ ի՞նչ ես անում,  
եղ ի՞նչ առու յես հանում,  
Ջուրը եղ ո՞ւր ես տանում:

— Զրին ճամբա յեմ բանում,  
Հասկերին ջուր եմ տանում,  
Տե՛ս, աշխատանք եմ անում:

— Հոնքերդ մրե՛լ, մրե՛լ,  
Բահը թեվիդ ես դրե՛լ,  
Եղ ի՞նչ լավ ես կարմրե՛լ:

— Տղա՛ ջան, թեվդ քըշտի,  
Մի կանգնի աբտի կըշտին,  
Ձեռքերս դարձան բըշտիկ:

— Աղջիկ', ջուրը թող գնա,  
Դու աբտի կըշտին մնա,  
Զրի հետ դու մի՛ գնա:

— Ա՛յ սիմուլյանտ փուչ տղա,  
Ձուրն ե աբտի մեջ վազում,  
Դու կանգնել ի՞նչ ես խոսում:

## ԿՈՆԽՈՋՆԻԿ ՆՎԱՐԴԸ

— Ես ո՞ւր գնաց Նվարդը,  
Մեր կոլխոզնիկ Նվարդը,  
Ջա՛ն Նվա՛րդը, Նվա՛րդը,  
Բացվել ե դաշտի վարդը:

— Տղա՛, եղ ի՞նչ ես յերգում,  
Եղ ի՞նչ վարդ ե քո ձեռքում,  
Ա՛յ կոլխոզնիկ, ժեր տղա,  
Ասա եղ ի՞նչ ես յերգում:

— Նանի, ո՞ւր ե Նվարդը,  
Նրան կըտամ ես վարդը,  
Ջա՛ն Նվա՛րդը, Նվա՛րդը,  
Բացվել ե դաշտի վարդը:

— Տղա՛, Նվարդը գնաց,  
Մաշինի հետ աբտ գնաց,  
Մածուն կերավ, կա՛թ ու հա՛ց,  
Կեպին դրեց աբտ գնաց:

\*\*\*

Լաչակդ ցած ես առել,  
Գողնոցդ բաց ես արել,  
Ա՛յ բամբակ քաղող աղջիկ  
Մատներդ թաց ես արել:

Բամբակն ե թեւ-թեւ դողում,  
Արեն ե դռնիդ չողում,  
Թըշերիդ արնի միջին  
Արևի շողն ե չողում:

Հովը քեզ պաչ ե անում,  
Մաղերդ քաշում, տանում,  
Բամբակի արտի միջի  
Շաղը քեզ թաց ե անում:

Ձա՛ն աղջիկ, ջա՛ն ջա՛ն աղջիկ,  
Ձա՛ն բամբակ քաղող աղջիկ,  
Յե՛կ յես-դու պայման կապենք,  
Ես արտը քաղենք, աղջիկ:

---

ԻՍ ՎԱՅՐԵՆԻ ՎԱՐԴԵՆԻ

## ԻՄ ՎԱՅՐԵՆԻ ՎԱՐԴԵՆԻ

զարնան ծաղկում ես, կարմրում ես, վարդենի,  
դերի մեջ վառվում ես, իմ վայրենի վարդենի.  
Չդ՞ յեղինճ ե բուսնում և բաղեղներ լայնաթուփ,  
Չդ՞ խոտեր են հյուսվում, իմ վայրենի վարդենի:

Կությունից եմ հիշում, փոքրիկ եյիր, շատ  
փոքրիկ,  
են սերմեց քեզ մի ուր բաղեղների մեջ վայրի  
արդեն հասուն ես, կուսցել ես վարդերից,  
և ի վրա յես կախվել, իմ վայրենի վարդենի:

ու խարկել եմ սիրով ու կոմյերիս հույզերով,  
տուն եմ դարձրել յես իմ միտքը վայրենի,  
ու թյունս, վորպես չող, շաղ եմ տվել քարերին,  
և կանգնել եմ չուրջդ, իմ գեղեցիկ վարդենի:

դների մեջ ընկած, յեղիններին դու գերի,  
սովում ես, ծիծաղում ու թափում ես թերթերդ,  
դարդից պոկում ես քո գեղեցիկ զարդերը,  
ես տալիս ժայռերին, իմ վայրենի վարդենի:

ն առնում ե նրանց և ցանում ե ձորի մեջ,  
ես մենակ որորվում, դրկում խոտերը վայրի,  
ում ես ժայռերից, ցած ես նայում ամոսսով,  
դեցիկ վարդի թուփ, իմ վայրենի վարդենի:

ե միայն, վորպես յերդ, ժայռերի տակ զլլում,  
ում ե խոտերը և դարկվելով քարերին  
վում ե թերթերիդ կարկաչում ե ու գնում,  
դեցիկ վարդի թուփ, իմ վայրենի վարդենի:

\*\*\*

Տե՛ս, փորում են ըո ձորը, գլորում են ժայռերը,  
Յերկաթուղին ե գալիս, իմ գեղեցիկ վարդենի:  
Ծուխը, վորպես սև քամի, ըո թերթերը կլկղի  
Յեվ ըո ձորի ժայռերին կիջնի վորպես մառախուղ:

Կրիաները պիտի փախչեն կանաչները ծալելով,  
Յեվ մողեսները ծխից խեղադարձած արշավեն,  
Յեվ նապաստակը ձորիդ, բաղեղները բաղմաթիվ  
Քո թփերին զարկելով պիտի ծխից խեղդվի:

Պիտի իջնի ծուխը սև, վորպես բարակ, մուխ չղարշ,  
Նստի սիրուն թերթերիդ, ըո ջրերին խառնվի,  
Յեվ ըո բոլոր ժայռերի ու խոտերի արանքից  
Գորրոշու պես բարձրանա, իմ գեղեցիկ վարդենի:

\*\*\*

Ե՛կ, այդպես ենք մենք գալիս, յերկաթեղեն յերգերով,  
Յերկաթեղեն յերգերով մենք մտնում ենք ձորերը,  
Յե՛վ ամայի, ե՛ վայրի բնությունը հղկելով  
Մենք նոր ուղի յենք դժում, իմ վայրենի վարդենի:


Վարդերի տակ կռացած ծիծաղում ես խենթի պես,  
Ու ծիծաղդ բոցի պես թափ ես տալիս ժայռերին,  
Ե՛կ, իմ անուշ վարդենի, ի՞նչ ես ծեծում մատներս,  
Ո՛ւ արյունա շաղ տալիս ըո գեղեցիկ վարդերին:

Մի դինամիտ, տե՛ս, պայթեց, յերկաթուղին ե գալիս  
Ի՞նչպես պահեմ իմ ճի՛չը, իմ քրքիջը վայրենի՛,  
Քո թփերի արանքից դուրս եմ փախչում ծիծաղով,  
Իմ գեղեցիկ վարդի թուփ, իմ վայրենի վարդենի:

Յեվ ծափում եմ հրճվանքից, ցնծությունից խեղադարձ  
Քո վարդերը զարկում եմ յերկաթուղու ճակատին,  
Ու ճչո՛ւմ եմ ու կանչում ու դողում եմ կարոտից,  
Իմ գեղեցիկ վարդի թուփ, իմ վայրենի վարդենի:

Շուրջդ տներ կբուսնեն և ըո ձորը կաղմկի,  
Գործարաններ կճշան ծխացան ու վիթխարի,  
Յեվ մի աղջիկ դուցե քեզ, յեղինճներից աղատի,  
Իմ գեղեցիկ վարդի թուփ, իմ վայրենի վարդենի:

1008  
34489



## ՋԱՆ ԻՄ ՅԵՂԻՆՃ

Ջա՛ն իմ յեղինճ, վա՛յրի յեղինճ,  
Քեզնից հիմա մետաքս կուզենք:

Նայի՛ր, նայի՛ր, տե՛ս, այս ձորում  
Յեղինճներ են բացվե՛լ: բուսե՛լ,  
Շուտո՞վ, շուտո՞վ այս յեղինճից,  
Պետք է բարակ մետաքս հյուսենք:

Ջա՛ն իմ յեղինճ, վա՛յրի յեղինճ,  
Քեզնից հիմա մետաքս կուզենք:

Շուտով կերթամ կոռպերատիվ,  
Ու յեղինճե շապիկ կուզեմ,  
Ու դուրս կգամ ուրա՛խ, ուրա՛խ,  
Կծիծաղեմ ու կհուզվեմ:

Ջա՛ն իմ յեղինճ, վա՛յրի յեղինճ,  
Քեզնից հիմա մետաքս կուզենք:

Հովը խառնեց յեղինճները,  
Յեղինճները իրար անցան,  
Յես պոկեցի մի փունջ յեղինճ,  
Ձարկի թեփիս ու հեռացա:

Ջա՛ն իմ յեղինճ, վա՛յրի յեղինճ,  
Քեզնից հիմա մետաքս կուզենք:

## ԳԱՐՆԱՆ ՄԱՍԻՆ

Այրի՛լ ամիսն եր. արևին կարոտ,  
Գարնանացանի Փրոնտից դարձած,  
Անցնում եյի յես մի բարձր սաբով,  
Մեջքիս գրքերի մի կապոց բարձած:

Որը կեսօր եր. շողերի ջրով  
Հեղեղված եր վողջ հորիզոնը ջինջ,  
Արևն եր շողում անսահման սիրով  
Մանիշակագույն յերկնքի միջից:

Նայեցի վերև անհռելի բարձունք,  
Պայծա՛ռ, պսպղո՛ւն, աղամանդեղեն,  
Ու իջնող ջրեր ու հալչող ձյուններ,  
Ձնծաղիկների ժպտացող թերթեր,  
Յե՛վ ծիլ և՛ կանաչ և՛ ծաղիկ և՛ ձյուն,  
Կռունկների վազք ու պայծառ յերթեր....

Արև եր շուրջս, կարկաչ ու թռչուն,  
Ու դեմս փոված անսահման մի դաշտ  
Գարունն եր խորքից ուժգին շառաչում,—  
Տրակտորները պատռում են հողը,  
Իրար են խառնվել յերկաթե ծուխը,  
Դաշտի գոլորշին, արևի շողը:

Սկսեցի յերգել, ծիծաղե՛լ, ծափե՛լ,  
Իմ սրտի ամբողջ ծիծաղը թափել,  
Հրճվանքի՛ց, տենդի՛ց, կարոտի՛ց դողալ,

կարոտեմ, սիրե՛մ, — սիրե՛մ ու շողա՛մ,  
Յեւ վամբուղջ սրտով զընգալ սարում,  
Բշալեմ, դռնեմ, — ո՛հ, յեղնող դարուն,  
Ո՛հ, քաղցր դարուն, ո՛հ, դարուն անգին,  
Վողջունս ծիծաղի՛դ, արեւի՛դ, կյանքի՛դ:

Խըփո՛ւմ եր սիրտս, խըփո՛ւմ եր սիրտս,  
Խըփո՛ւմ, ծըփծըփո՛ւմ ուրախությունից,  
— Ի՞նչ կլինի մի բան, մի բան գրեմ, ասի,  
Վերցրի մատիտը նստեցի քարին,  
Ու գրեցի այս յերգը դարնան մասին:

Ապրիլ ամիսն եր. արեւին կարոտ,  
Գարնանացանի ֆրոնտից դարձած,  
Անցնում եյի յես մի բարձր սարով  
Մեջքիս գրքերի մի կապոց բարձած:

1930 թ. ապրիլ

\*\*\*

Քաղաքից գործէքներ բերեցին,  
Չափեցին մեր սարերն ու անցան  
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Յեկան մեր սարը չափեցին,  
Մեր կավից տարան քաղաք,  
Պիոներները թմբուկ դարկեցին,  
Արտուտները արտերից փախան:

Գարուն եր. քլունգո՛ւվ, թափո՛ւվ,  
Բանվորները մեր սարը քանդեցին,  
Ծովեցին մեր սարի տակով  
Մեր գետի ջուրը բանդեցին:

Մեր ձորից ավազ հանեցին,  
Փըշրեցին մեր ձորի քարերը,  
Մեր ձորում ումբեր ցանեցին,  
Ցնցեցին մեր սիրուն սարերը:

||

Խրճիթ իմ, յեղինճով պատած,  
Քարափին որորվող բարդենի,  
Հովերի թևի տակ մտած  
Իմ սիրո՛ւն, իմ սիրո՛ւն վարդենի:

Լիւումբերքին եմ հանձնում յես ձեզ,  
Դուք կընկնե՛ք, դուք կընկնե՛ք անպատճառ,  
Ի՛մ տընակ, ի՛մ սիրուն վարդենի՛,  
Քարափին ուրովոյ բարդի ծա՛ռ:

Ո՛հ, ծխա, դինամիտ իմ, պայթի՛ր,  
Ուրովի՛ր, իմ հարբած վարդենի,  
Ո՛հ, ուումբ իմ, վորոտա ու քանդի՛ր,  
Ուրովի՛ր, իմ հարբած բարդենի:

\*\*\*

Յեկան մեր սարը չափեցին,  
Մեր կալից տարան քաղաք,  
Պիոներները թմբուկ զարկեցին,  
Արտուտները արտերից փախան:

ՅԵՐԿՈՒ ՍԵՐ

Խաղ ես անում արտում, հավաքում ես կռուք,  
Ու խանձում ես հասկեր,  
Դաշտի հովն ե ղեմքիդ յազմի վրա Փրուում,  
Լեյզի, ծիծաղ ու սե'ր:

Ծերացել ե հայրդ ու մաշվել ե, ինչպես  
Քամահարված մի դաշտ,  
Նրա ճակտի վրա ակոսներն են կյանքի  
Առո՛ւ-առո՛ւ քաշված:

Ճըռնչում ե սայլը մաշված ճանապարհով,  
Լավուկները քերծում,  
Կանաչ բարդերներն են ձեր կալի մեջ ուրախ  
Յորնի դեզը ծեծում:

Ջարդուփչուր կլինի հորդ սելը, Լեյզի,  
Յեվ կուշանա ճամբին,  
Լուսադիչեր մի որ փշո՛ւր-փշո՛ւր կլինի  
Ձեր արտերի ափին:

Քեզ կտեսնեմ, Լեյզի, լույս աչքերդ՝ վաղվա  
Ակունքներին հառած,  
Քեզ կտեսնեմ մի որ կառուցումի ճամբին  
Կոմսոմոլկա դառած:



Հունձ ե անում հայրդ, դու կապում ես կուսթ  
 Ու խանձում ես հասկեր,  
 Դաշտի հովն ե դեմքիդ յազմի վրա ֆլուտում,  
 Լեյլի՛, ծիծա՛ղ, ու սե՛ր:

## ՆԱՄԱԿ

Իրիկուն եր. դարնան խաղաղ իրիկուն,  
 Քայլում եյինք, գնում եյինք միասին,  
 Գնում եյինք դեպի՛ Հոռոմ—դեպի՛ տուն,  
 Իրիկուն եր արևոտ ու լուսադին:

Գործուղել եր մեզ շրջանի կոմիտեն,  
 Զինել եր մեզ թեղիսներով, թղթերով,  
 Դյուղն եր հեռու, բլուրի տակ, դեմ ու դեմ,  
 Գնում եյինք կոմսոմոլի գործերով:

Արտի մեջ եր, որորվում եր հասակդ,  
 Ինչպես հասկը որորվում ե հովերում,  
 Թմբի վրա ծալապատիկ նստեցինք,  
 Արտը հպարտ ծածանվում եր ու ծփում:

Իրիկուն եր. գնում եյինք միասին,  
 Լցված անհուն կարոտանքով ու սիրով,  
 Գործուղել եր մեզ շրջանի կոմիտեն,  
 Գնում եյինք կոմսոմոլի գործերով:



Այն որվանից, ինչպես ջուրը արոտով,  
 Տարիները կարկաչել են դնացել,  
 Բայց յես նորից հսկայական կարոտով,  
 Հիշում եմ քեզ, ի՛մ բարեկամ, ի՛մ ընկեր:

Մոռացումը թող ծուխ դառնա ինձ համար ,  
Թող ծուխ դառնա անարեգակ ու տանջող ,  
Թե վոր մի որ են որերը մոռանամ ,  
Են յերեկոն յերգի նման ինձ կանչող :

Դու իմ սրտին այնքա՛ն մոտ ես , այնքա՛ն մոտ ,  
Քեմքը յերեք մտքիս միջից չի մարում ,  
Քեզ հիշելիս բարձրանում ե նոր կարոտ ,  
Սիրաս նորից բորբոքում ե ու ալրում :

Ո՛հ , իմ հեռու , հալատարի՛մ բարեկամ ,  
Ահա՛ կրկին անցնում եմ յես նույն ճամբով ,  
Ծանոթ գյուղը սպասում ե սարի տակ  
Գնում եմ յես կոմսոմոլի գործերով :

Յերեկո յե . նորից արտերն են ծվում ,  
Հովերի մեջ որորվում են հասկերը ,  
Սիրտս նորից տրոփում ե ու խփում ,  
Հորիզոնում բարձրանում են աստղե՛րը :

Կյանքը հեռու չարտել ե ինձ ու քեզ ,  
Կառուցումը մեզ պոկել ե իրարից ,  
Բայց զգում եմ , հասկանում եմ ու գիտեմ ,  
Վոր մոտիկ ու հարադատ ես կրկին ինձ :

Չե՞մ , վոր անհուն հսկայական մի թափով  
Մենք ամենքս մաքրահարթում ենք ճամբան ,  
Յեվ հենց անդուլ այդ աշխատանքն ե կապում  
Մեր սրտերը արևոտ ու արնակամ :

Չե՛մ մոռանա , չե՛մ մոռանա քեզ յերբեք ,  
Իմ լուսանուն , աստղաթափտ խնդություն ,  
Քեզ հիշելով անցնում եմ յես յերգելով ,  
Քեզ յերգելով գնում եմ յես դեպի տուն :

## Լ Ե Լ Ա

№-իՆ  
Ուրիշ աղջիկ ես դու ,  
Ուրիշ սեր ես դու ,  
Ուրիշ խնդություն...

Դու արդեն հասուն ես դարձել ,  
Հոնքերիդ թառել ե ծիծաղ ,  
Աչքերիդ պայծառ ջրերում  
Լողում ե սիրո մի հորձանք :

Ինչքա՛ն տեսնում եմ յես քեզ ,  
Հիշո՛ւմ եմ մեր կյանքը հերվա ,  
Դու հասուն աղջիկ ես դարձել  
Սիրելի՛ , սիրելի՛ Լելա :



Են յե՞րբ եր , յե՞րբ եր արդյո՞ք ,  
Գրեցի քեզ մի բացիկ ,  
Ու սիրտս խենթ ու խելառ  
Քո սրտի գեմաց բացի :

Ա՛խ , չար եմ , չար եմ յեղել ,  
Յեղել եմ սիրով խելառ ,  
Ու հիմա կրկին , կրկին  
Սիրում եմ , անուշ Լելա :

Յեւել ենք մանկատնից,  
Մըտել ենք կյանքը խնդուն,  
Լսո՞ւմ ես վորքան թափո՛ւյլ  
Մեր սիրտն ե դարկո՛ւմ, թնդո՛ւմ:

Խըփում ե մեր աչքերում  
Նոր սերը հորձա՛նք—հորձա՛նք,  
Ախ, անո՛ւշ, անո՛ւշ Լեւա,  
Մենք արդեն հասուն դարձանք:



Ինչքա՛ն տեսնում եմ յես քեզ,  
Հիշո՛ւմ եմ մեր կյանքը հերվա,  
Դու հասուն աղջիկ ես դարձել,  
Սիրելի՛, սիրելի՛ Լեւա:

## Ս Ե Ր Ը

Դու յերգ դ՛րձրի՜ր որեքս բոլոր,  
Վառեցիր սիրտս արեգակի պես,  
Զեյի՛ հավատում, չե՛յի՛ հավատում,  
Վոր մի որ գուցե մոռանամ յես քեզ:

### I.

Սիրտս ձգում եր կարծես մաղնիսային մի լար,  
Յեւ թանձրանում եր կարոտը մի ինչ—վոր բանի,  
Յես ուզում եյի նրան տեսնել յերկա՛ր, յերկա՛ր,  
Սիրտս ճոճում եր մի լուսանման քամի...

Յես ամեն ո՛ր, ամեն ո՛ր հանդիպում եյի նրան,  
Ամեն որ կռիւլ եր աչքի ու սրտի,  
Են վո՞ր աշակերտն ե, վոր մխում ե սիրուց,  
Բայց կարող ե հանգիստ իր դասերը սերտի:

Ռոմանտիկական ամպն եր իմ աչքերը գերել  
Յեւ ծիածան եր աղեղվել սրտիս,  
Յեւ արեգակն եր իմ դասընկերը,  
Լուսինը ասես շրջում շուրթերիս:

Ու նա աղջկային իր շուրթերով նաղուկ  
Խոստումներ եր տալիս անդավաճան սիրո,  
Սրտիս հովիտներով արեգակն եր վաղում,  
Վողողվում եր հոգիս յերջանկության ջրով:

### II.

Բայց դու գիտես, ընկե՛ր, վոր սիրելը հեշտ չի,  
Յեւ աղջկա սերը՝ ծաղկանոցի ծաղիկ,  
Վոր ամեն մարդ ուզենա ցանկությունով չնչին  
Իր ձեռքը յերկարացնի ու թփից քաղի:

Յես միայն հետո', հետո' իմացա,  
Վոր, կարմի'ր, կարմի'ր վարդերս չկան,  
Վոր, դժվար ե, դիտե'ք, շատ դժվար ե, կյանքում  
Յնորական սիրով սիրել աղջկան:

Ո'հ, յես նոր եմ այնպես խորունկ դգում սերը,  
Յե'վ հասկանում սիրո կախարդական լեզուն,  
Աշխատանքն ե սիրում, սնում անկեղծ սե'րը,  
Խոստումները դուր են, յերգումները՝ հնչյուն:

Յնորքներ են բոլոր մարդանքները սիրո,  
Վոր սկիզբ են առնում աշխատանքից հեռու,  
Պայծառ ցնորքներ են, վորոնք շուտ են մեռնում  
Ու ցնդում են ճերմակ մառախուղի նման:

### III.

Մնաս բարով, ընկեր, մնաս բարով, իմ սե'ր,  
Յերազների թասը յեղավ ջարդուփշուր,  
Են ուրիշ եր, յերբ յես յերազում եյի քեզ,  
Յնորական սիրով մառախուղ ու մշուշ:

Մեծացել եմ արդեն ու իմ դիմաց ահա  
Զընդում ե կյանքը, վորոտում ու յեռում,  
Քեզ իմ հիշողության մոխիրներում պահած  
Յես դիմում եմ դեպի լուսացնցուղ հեռուն:

Պետք ե դնալ առաջ, պետք ե ժպտալ կյանքին,  
Ճանապարհին փնտռել ուրիշ, ուրիշ մի սեր,  
Մի սիրտ դտնել հրոտ, բարախներով անդին,  
Հայացքներով ծանոթ, հարազատ ու լուսե':

Մի սիրտ դտնել, կապվել աշխատանքի սիրով,  
Հայացքների հրով, նույնաման ու ջինջ,  
Լինել ընկե'ր ու սե'ր, լինել պա'րզ ու սիրո'վ  
Յեվ մոռանալ ընդմիշտ ցնորքները չնչին...

ՊԱՏԿԵՐՆԵՐ, ՅԵՐԳԵՐ

## ԱՐՏԸ ԽԱՂՈՒՄ Ե

Արտը խաղում է, ծփո՛ւմ, ծիծաղո՛ւմ,  
Հասկերն են վազում իրար հետևից,  
Արևը դեղին անձրև է մաղում,  
Արտը խաղում է, ծփո՛ւմ, ծիծաղո՛ւմ:

Հովերն են հոսում սարի կողերից,  
Արտը լցվել է գուլալ հովերով,  
Հասկերն են քրտնել դեղին շողերից,  
Արտը լողում է դեղին թևերով:

Հովը լիցում է կանաչ հասկերը,  
Հասկերը գլխիկներն իրար են քսում,  
Լուռ փսիսում են ու թե՛թև, թե՛թև,  
Իրար հրելով առաջ են վազում:

Արտը խաղում է, ծփո՛ւմ, ծիծաղո՛ւմ,  
Հասկերն են վազում իրար հետևից,  
Արևը դեղին անձրև է մաղում  
Արտը խաղում է, ծփո՛ւմ, ծիծաղո՛ւմ:



Ջա՛ն, սարի հովեր, հասկե՛ր ու շողե՛ր,  
Ջարկե՛ք, ծիծաղե՛ք, համբուրե՛ք իրար,  
Ձե՛ր պարը ձգեք անթումբ դաշտերով,  
Յերգե՛ք արտերի ինտերնացիոնալ:

## ԶԱՆԱՔԻ ՅԵՐԳԸ

Չանաք անենք, բամբակ մանենք,  
Իլիկները թո՛ղ դառնան:

Վորքա՛ն բամբակ, վորքա՛ն ծաղիկ,  
Հողն ե հեվում, հողն ե հեվում,  
Հողն ե խեղդվում իր ծիծաղից,  
Կնդուղները պատռո՛ւմ, ձեվո՛ւմ:

Չանաք անե՛նք, բամբակ մանե՛նք,  
Իլիկները թո՛ղ դառնան:

Արեն ասես գլա՛լ-գլա՛լ,  
Լույս ե լցրել ամեն թիւում,  
Ծիծաղում ե հողը խորքից,  
Իր ծիծաղն ե սրտից թափում:

Չանաք անե՛նք, բամբակ մանե՛նք,  
Իլիկները թո՛ղ դառնան:

— Իջի՛ր, քուլա, լույսի փաթիլ,  
Քաղի՛ր, ընկե՛ր, քաղի՛ր, քաղի՛ր,  
Ո՛հ, յերկիր իմ, հող իմ, հեվա՛,  
Խնդա խորքից ու ծիծաղիր:

Չանաք անե՛նք, բամբակ մանե՛նք,  
Իլիկները թո՛ղ դառնան:

## ՀԱՅԸ

Լիք հասկերն են խաղո՛ւմ, չողո՛ւմ,  
Տարուբերվում հո՛վ ու հո՛ծ,  
Դաշտից դեպի սարն ե լողում  
Համատարած մի մեծ բոց:

Մեր հույզերն են այդպես չողում,  
Այդ մեր հացն ե ալիք տալիս,  
Մեր քրտինքն ե, վոր բարձրացել,  
Որորվո՛ւմ ե, ծա՛փ ե տալիս:

Ամեն հասկը հույզի կապոց,  
Ու քիստերը լույսի չողեր,  
Ո՞վ ե գրել այդպիսի բոց  
Հույզերով լի յերգ ու տողեր:

\*\*\*

Լիք հասկերն են խաղո՛ւմ, չողո՛ւմ,  
Տարուբերվում հո՛վ ու հո՛ծ,  
Դաշտից դեպի սարն ե լողում  
Համատարած մի մեծ բոց:

## ՔԱՐՏԱՇԻ ՅԵՐԳԸ

Տաշվի՛ր, իմ քա՛ր, մաշվի՛ր, իմ քա՛ր,  
 Իմ վարդազույն, կարմիր քար,  
 Տե՛ս, դնում եմ քո մեջ մի դար,  
 Տաշվի՛ր, իմ քար, մաշվի՛ր, իմ քա՛ր:

Տաշո՛ւմ եմ քեզ, նախշո՛ւմ եմ քեզ,  
 Քեզ տալիս եմ ձե՛, նկա՛ր,  
 Կյանքս կա՛թ-կա՛թ բաշխում եմ քեզ,  
 Տաշվի՛ր, իմ քա՛ր, մաշվի՛ր, իմ քա՛ր:

Շենք ենք շինում, բանվորի շենք,  
 Քարտաշներս ժողով արինք,  
 Վոր քարերը արագ տաշենք,  
 Տաշվի՛ր, իմ քա՛ր, մաշվի՛ր, իմ քա՛ր:

Սիրո՛ւմ եմ քեզ, սիրո՛ւմ եմ քեզ,  
 Մաշվի՛ր, իմ քա՛ր, տաշվի՛ր, իմ քա՛ր,  
 Ուրա՛խ, ուրա՛խ յերգում եմ, տե՛ս,  
 Տաշվի՛ր, իմ քա՛ր, մաշվի՛ր, իմ քա՛ր:

\*\*\*

Այս ջրերին պետք է ընթացք տալ,  
 Պետք է վառել լուսացուղը,  
 Չե՞, վոր դեռ նոր է, դեռ սկիզբն է,  
 Ահից նավում ենք դեպի խորքը:

Արդեն յերևում են առաջին թռչունները,  
 Յեվ մեր խնդությունը սաստկանում է,  
 Արդեն յեռո՛ւմ է, յելնո՛ւմ է, արևը—  
 Յեվ աշխարհն ամբողջ արևում է:

Կգա՛ առավոտը, մենք ափը կ'ելնենք,  
 Յեվ կբարձրանանք ցամա՛քը, լո՛ւյսը,  
 Յերբ յերկրազույնը ծայրեծայր կառնենք  
 Յեվ կնվաճենք այս ովկիանոսը...

ԸՆԿ. Լ. Մ—ԻՆ

Յես հիշում եմ անմոռաց  
 են գիշերը գյուղական,  
 Յերբ ողայից տունն յեկա,  
 Պառկած եյիր դու արթուն,  
 Մտալինը ծխում եր  
 Վառարանի ցուլքի տակ,  
 Սենյակի մի անկյունում,  
 Լենինը թերթ եր կարդում:

Իոցավառված կարոտով  
 Պինդ սեղմեցի ձեռքերդ,  
 Վողջունեցի սիրով քեզ,  
 Ու հասկացա, վոր կյանքում,  
 Դասակարգն ե մեզ տվել  
 Աշխատանք ու հաղթանակ,  
 Վոր մի անհուն ցնծությամբ  
 Սոցիալիզմ ենք կառուցում:

Ու պատմեցի, վոր կարմիր  
 Անծայրածիր մի դարուն,  
 Լուսաթաթախ աչքերով  
 Իարձրանում ե ամեն որ,  
 Անծայրածիր մի դարուն  
 Կարկաչում ե աշխարհում,  
 Մեր դաշտերում լայնանիստ,  
 Մեր ձորերում խորախոր:

Թե՛վ այդ դարնան համար ե,  
 Վոր բոցեղեն յերգերով,  
 Դադեթներով, գրքերով  
 Ներս ենք մտել գյուղերը,  
 Շեփորում ենք ու քանդում,  
 Ու փչում ենք նոր գյուղի  
 Յե՛վ ղիթխարի կառուցման  
 Արշարույսի փողերը:

Ու են անուշ վայրկյանին  
 Քո աչքերում կարդացի  
 Յե՛վ խնդություն, ե՛ ծիծաղ  
 Յե՛վ նոր կարոտը մարդու,—  
 Յերջանկության լուսաչող  
 Անվերադարձ խնդումի  
 Մի գեղեցիկ իրիկուն  
 Խոսում եյինք յես ու դու:

Ժամացույցը, սեղանին,  
 Կրծում եր սիրտը որվա,  
 Մութը, վորպես մի չղջիկ  
 Պատից պատ եր թպրտում,  
 Ստալինը ծխում եր  
 Վառարանի ցուլքի տակ,  
 Իսկ Լենինը դեռ նստած  
 Անկյունում թերթ եր կարդում:



Խոսում եյինք ու ձևում  
Վառարանի բոցերը,  
Ժամացույցը սեղանին  
Զըխչելիկում եր անհանգիստ,  
Գիշերը, չոր կոճղի պես,  
Ճարճատում եր ու վառվում  
Յե՛վ լուսաբաց եր բերում,  
Յե՛վ աշխատանք, ե՛կ հանգիստ:

---

Մ Ո Ւ Տ Ք Ը

## ՀԱՆՔՈՒՍ

Մեր սրտում ծիծաղ, մեր սրտում կրակ,  
 Զա՛րկ, ընկե՛ր, զա՛րկ.  
 Քրտինքն ե կաթում պղնձի վրա,  
 Զա՛րկ, ընկե՛ր, զա՛րկ:

Զգիտենք զբոսում արև՝ ե, ամպ ե,  
 Զա՛րկ, ընկե՛ր, զա՛րկ,  
 Պատեց ցոլում ե կարբիտի լամպը,  
 Զա՛րկ, ընկե՛ր, զա՛րկ:

Յերկիրը մեղնեց պղնձ ե ուղում,  
 Զա՛րկ, ընկե՛ր, զա՛րկ,  
 Մենք միասին ենք ծիծաղում, հուպվում,  
 Զա՛րկ, ընկե՛ր, զա՛րկ:

\*\*\*

Մեր սրտում ծիծաղ, մեր սրտում կրակ,  
 Զա՛րկ, ընկե՛ր, զա՛րկ,  
 Քրտինքն ե կաթում պղնձի վրա,  
 Զա՛րկ, ընկե՛ր, զա՛րկ:

## ԱԼԻ ԿԱՖԱՐԸ

Պատանի եր նա, յերբ հանքը մտաւ,  
Կապույտ յերկնքում արևը թողած,  
Կարբիտի լամպով պղինձը դտաւ,  
Քլունգը յերգեց ու ժայռը դողաց,

Քլունգը յերգեց ու ժայռը դողաց,  
Ալի Կաֆարը հանքում մեծացաւ՝  
Կապույտ յերկնքում արևը թողած:



Հանքիումը նրան ազատեց հանքից,  
— Թող հանգստանա Ալի Կաֆարը.  
Կաֆարը նայեց իր ձեռքի լամպին  
Ու հուզված ծեծեց պղնձաքարը:

Քլունգը յերգեց ու ժայռը դողաց,  
Ալի Կաֆարը հանքում մեծացաւ՝  
Կապույտ յերկնքում արևը թողած:

Յերբ նա դուրս յեկաւ քլունգով, լամպով,—  
Թվաց, թե նրան մի բաղուկ պահեց  
Կոնգ առաւ հանկարծ ու կարոտանքով  
Դարձաւ իր հանքի խորքերը նայեց:

Քլունգը յերգեց ու ժայռը դողաց.  
Ալի Կաֆարը հանքում մեծացաւ՝  
Կապույտ յերկնքում արևը թողած:

Նայեց, իսկ դրսում, հանքի բերանից,  
Իր բաղուկներն էր դարձնում պարզել,  
Ալի Կաֆարը իր լամպը վառեց  
Ու կրկին հանքի խորքերը վազեց:

Քլունգը յերգեց ու ժայռը դողաց.  
Ալի Կաֆարը հանքում մեծացաւ՝  
Կապույտ յերկնքում արևը թողած:

— Յերկիրը կարմիր պղինձ է ուզում,  
Չե՛մ ուզում հանքի՛ստ, չե՛մ ուզում արև,  
Յերգի՛ր դու, իմ սի՛բոս, յերգի՛ր, իմ քլո՛նգ,  
Յերգե՛ք, իմ սիրած պղնձաքարեր:—

Քլունգը յերգեց ու ժայռը դողաց,  
Ալի Կաֆարը հանքում մեծացաւ՝  
Կապույտ յերկնքում արևը թողած:

## ՎԱԳՈՆՆԵՐԸ

Սլանում են վազոնները,  
Սլանում են վազում,  
Յերկիրը ճշում է—պղի՛նձ,  
Արթիկ տո՛ւֆ, նա՛վթ ու մազո՛ւթ...

Հե՛յ, լսի՛ր, լսի՛ր, ընկե՛ր,  
Այս ի՞նչ վազոններ են  
Մոլորվել զծի վրա,  
Իսկ սրա՛նք, սրա՛նք,  
Այս վազոնները դատարկ.  
Ի՞նչու չեն վազում,  
Չե՞ս լսում,  
Յերկիրը ճշում է—պղի՛նձ,  
Արթիկ տո՛ւֆ, նա՛վթ ու մազո՛ւթ...

Ջարկո՛ւմ է քո ուսին  
Յերկրի ձեռքը,  
— Խոսի՛ր,—ասում է նա,  
Լսո՞ւմ ես, ընկե՛ր, հեղամյակի յերգը.  
Յուրաքանչյուր վազո՛ն, շողեմեքենա՛,  
Յերբ կանգնում է պարապ,  
Յերբ չի՛ վազում արագ,  
Մեր մարմնից կտրվում է  
Մի արնատար անոթ,  
Մի զարկերակ:

Ահա թե ինչո՛ւ

Անդրեյեվը տվեց հրաման.

— Վո՛չ մի պարապուրդ ու կանգնում,

Վո՛չ մի պրոգնոզ.

Թո՛ղ զնացքները հե՛վան,

Թո՛ղ զնացքների վազքը սաստկանա,

Յերևանից Թիֆլիս—

Բազո՛ւ—Յերևա՛ն,

Վազոնները բեռնված

Արագաթափ զնան:

## ԲԱՅԼՇԵՎԻԿԻ ՊԵՍ

Մի՛շտ զգա՛ստ, պատրա՛ստ յեղիւր—բայլչեիկի՛ պես,  
Հարվածդ մի՛շտ մեխին—բայլչեիկի՛ պես:

Մտի՛ր, հանքը մտի՛ր, պղնձի յերակ դտիր,  
Քլունդո՛վ, մուրճո՛վ մտիր,—բայլչեիկի՛ պես:

Զորերում ումբերը դիր, ջրանցքնե՛ր, լամպե՛ր շինիր,  
Ժայռերը քանդի՛ր, քանդի՛ր,—բայլչեիկի՛ պես:

Վո՛չ միայն նայիր հողին, աշխարհի կեղևը տես,  
Այլ կյանքը հիմքից փոխիր,—բայլչեիկի՛ պես:

Մի՛շտ զգա՛ստ, պատրա՛ստ յեղիւր,—բայլչեիկի՛ պես,  
Հարվածդ մի՛շտ մեխին,—բայլչեիկի՛ պես:

## ԿԱՌՈՒՑՄԱՆ ՅԵՐԳ

Մենք մի հոյակապ աշխարհ ենք կերտում,  
Լենինն և պաշտօն աչքերը թարթում,  
Բո՛ց ու քրտի՛նք և մեր դեմքից կաթում,  
Մենք մի հոյակապ աշխարհ ենք կերտում:

Հսկո՛ւմ ենք արթուն ու դիրք ենք կարդո՛ւմ,  
Յերգեր/ ենք յերգո՛ւմ, դաշտեր ենք հերկո՛ւմ.  
Շարո՛ւմ ենք, շինո՛ւմ, դրո՛ւմ ու թերթո՛ւմ,—  
Մենք մի հոյակապ աշխարհ ենք կերտում:

Սիբիրից մինչև Արարատ անցի՛ր.  
Մենք կառուցում ենք, պայքարո՛ւմ, մարտո՛ւմ,  
Բոց՛ ու քրտի՛նք և մեր դեմքից կաթում,—  
Մենք մի հոյակապ աշխարհ ենք կերտում:



Յերկիր իմ անձիւր, կերտիւր, կառուցիւր,  
 Հնգամյակների թեւերով դարձիւր,  
 Տեմպերով զնա՛, չողա՛, բարձրացիւր,  
 Յերկիր իմ, անցիւր, կերտիւր, կառուցիւր:

Ընկնում են այնտեղ կարգերը արյուն,  
 Հին կյանքը նեխվում, վայրենջը և տալիս —  
 Քեզանում շոխե՛ղ, կառուցո՛ւմ, զարո՛ւմ,  
 Վազք և ու ծիծաղ, վերե՛լք ու մայի՛ս:



Յերկիր իմ անձիւր, կերտիւր, կառուցիւր,  
 Հնգամյակների թեւերով դարձիւր,  
 Տեմպերով զնա՛, չողա՛, բարձրացիւր,  
 Յերկիր իմ անձիւր, կերտիւր, կառուցիւր:

---

ՅԵՐԿՈՒ ՊՈԵՄ

## ՇՐՋՈՒՄ ԵՐ ՔՍԵՆՈՖՈՆԸ

Արադածն եր իմ շուրջը և ամպերը դե՛ղ-դե՛ղ,  
Վոր համբուրվում եյին արեգակի հետ,  
Վոր լողանում եյին շողերի ծովում,  
Ու հսկա ճերմակ թռչունների պես  
Խաղում եյին յերկու դադաթների վրա,  
Յե՛վ կապուտակը ճեղքելով լողում,  
Հալվում եյին նրա անհունության մեջ:

Որը զուլալ եր: Մայիսյան արեգակը  
Բարձրանում եր կապույտ իր ճանապարհով.  
Ներքևում գյուղեր եյին և ամեն գյուղին  
Չքե՛լ եր ծխի՛, շողի՛ մառախուղը,  
Կարծես հրդեհվում եյին բաղմաթիվ հյուղեր  
Ու բարձրանում եր շողերով չաղաղված ծուխը:

Թիկնե՛լ եմ մի քարի. թռչուններն են անցնում  
Կարկաչում են ջրերը Արադածից ցած,  
Ամպերն են այնտեղ բարձրացել պարի,  
Ծիծաղում են անթիվ ծաղիկներ բացված,  
Բնությունը վորքա՛ն, վորքա՛ն է բարի,  
Հյուսե՛լ է ասես ծաղկաղարդ մի գորգ  
Ու շուռ է տվել Արադած սարին:

Ծիծաղում եր սիրտս ու խնդությունից  
Յերգում եյի յես, բա՛րձր, բա՛րձր,  
Իմ դեմը արեգակն եր և լուսաբացը.  
Յե՛վ ամպերի պարը Արադածի վրա,  
Յերբ յես թողեցի իմ գրկած քարը,  
Թափառեցի մենակ ու չըջեցի յերկար:



Յերբ հողնեցի, կրկին թիկն տվի քարին,  
 Յերեացին նորից նույն գյուղերը մոտիկ,  
 Յե՛վ Մանթաշը հաղար ծաղիկներով լցված,  
 Յե՛վ այն քարն անդամ ծանրամարմին ու ցից,  
 Վորին նստեց մի որ մեծ բանաստեղծը,  
 Արագածի ամպեղեն դադաթները յերգեց:

Մեկը չլվաց կողքին ու ձայն տվեց մեղմիկ,  
 Վոչխարները ձորով անցան թեթև', թեթև', —  
 Յեվ բռնեցին կանաչ ձորալանջը դեմի:  
 Ինչպես ճերմակ ամպի գետնատարած շերտեր:

Մոտեցավ իմ բարեկամը, իմ սիրելի Սեթին,  
 Կոլեկտիվի հովիվը, ձորադեմի գյուղից,  
 Բարե տվեց քաղցր, ձեռնափայտը շարժեց,  
 Յեվ աչքերը հանելով դեմը փռած ձորից,  
 Ձեռքի յերկարութամբ դեպի հեռուն պարզեց. —

— Շե՛ն ու հաստատ մնա մեր կառավարությունը,  
 Վոր մեր գեղերն եսենց չենացնում ե տակից,  
 Նրա քաշած պլանները շատ իմաստուն են,  
 Ի՛սկ ու Ի՛սկ խոսում են մեր քյասիրի սրտից:

Առաջ ի՞նչ գիտեցինք, ի՞նչ բան ե մաշինը,  
 Չու՞թը առնում եյինք ու զարկում քարին,  
 Սինոր եյինք քաշում իրարու դիմաց,  
 Ղալմաղա՛լ ու կռի՛վ, արցո՛ւնք ու արի՛ն...

Համա դու տե՛ս, ես մեր կառավարությանը,  
 Ի՛նչ հոռնարի տեր ե, ինչքա՛ն ե գիտակ,  
 Վոր մաշինա բերեց, կոլեկտի՛վ ու կոլխո՛ւղ  
 Դիրք ու կազեթ փոեց մեր աչքերի տակ:

Ա՛յ, տե՛ս, ինչ լավ ե կանաչել մեր արտը,  
 Հենց ասես դանձ ե առաջը փռած,  
 Մեր չալիրները տե՛ս, մի տե՛ս մեր հանդը,  
 Չե՛, հաջողակ ե մեր գործը դրած:

Յեվ նա ծոցից հանեց նկարադարդ մի թերթ,  
 Փռեց կանաչներին ու սկսեց կարդալ:  
 Յես լսում եյի նրան իմ գլուխը դրկած,  
 Նա կարդում եր յերկիրագնդի անցողաբժի մասին,  
 Բատրակների կյանքը և կռիվը նրանց. —  
 Յեվ այն մասին, թե ինչպես փոխվում ե կյանքը  
 Յեվ նրանք, վորոնք դարերով ապրել են  
 Յեվ չանգուել են հողը առանձի՛ն, առանձի՛ն,  
 Վորոնք միշտ յեղել են հեռավո՛ր, անհա՛շտ

Ու թմբեր են քաշել արյունի ու լացի,  
 Այսոր բարձրացել են նույն արևի դիմաց,  
 Նայում են նորից նույն Արագածին,  
 Բայց հյուսում են մի կյանք, վոր չի՛ յեղել յերբե՛ք,  
 Չի՛ չողացել անցած վոչ մի լուսաբացին:

Ա՛խ, վորքան պայծառ եր մտածում Սեթին,  
 Նրա միտքը կարկաչում եր ինչպես ջուրը,  
 Յեվ վարարում նման մի սրընթաց գետի.  
 Յերբ յես խոսում եյի կոմունիզմի մասին  
 Նրա աչքերը լայնանում եյին ծիծաղով լցված,  
 Ասես ճշում եր նա, վոր չուտ դա հասնի,

Հեռավոր կյանքը, ապագան անտե՛ս,  
Վոր կոմունիզմը շողա՛լ ու բացվի՛  
Մի հսկայական արշալուստի պես:

Յես խորասուզվեցի իմ մտքերի մեջ,  
Ասես մշուշ կանգնեց իմ աչքերի վրա,  
Տարիների մի դեզ արագընթաց թռավ,  
Շուրջս գործարաններ բարձրացան ու յեկան,  
Ծխի ամպեր շարժվեցին Արագածի վրա,  
Յեվ չչակներ ճչացին Արագածին մոտիկ,  
Արեգակն է յեկնում, ինչպես կարմիր կակաչ,  
Արծաթում է ամպերի յեղերքները բարակ,  
Համբուրվում է, ձյո՛ւնի, ծխոտ ամպե՛րի հետ,  
Յեվ ճեղքելով դեմի հորիզոնը կապույտ,  
Բարձրանում է պարզած անթիվ ասեղ ու նետ:



Բայց այն ո՞վ է արդյոք, վոր յեկնում է դեմից,  
Յերևում է աշնտեղ, այն լեռները վրա.  
Ինչ-վոր բան է փնտրում, պըրպըտում է կորած,  
Ծանո՛թ, ծանո՛թ մի կյանք, վոր տեսել է վաղուց,  
Մի ճանապարհ դուցե, վորով անցել է նա,  
Մի հեռավոր ձմրան, մի ցուրտ առավոտ:

— Յես այս յերկիրը տեսել եմ,  
Ա՛հ, սա ծանոթ է ինձ,  
Ահա Արագածը և Մասիսը ահա,  
Լեռներ, վորոնց դեմից իմ գորքը անցավ...  
Բայց ո՞ւր են, ո՞ւր են նրանք, խրճիթները այն հին,  
Այստեղ յես մարդիկ տեսա, վորոնք հողը  
Վարում էին արորով և հերկում էին մենակ,

Ապրում էին առանձին. թմբեր էին ձգվում  
Նրանց ամեն փոքրիկ կտոր հողի կողքով,  
Վառո՛ւմ էին թոնիր, վառո՛ւմ էին ճրագ,  
Ու հեքյաթում էին կրակնելի մոտ,  
Հորանջում էին անասո նների հետ,  
Տընքում էին հարկից և՛ կռվում էին,  
Մարտնչում էին ահավոր ու խե՛նթ,  
Խըմում էին գինի և՛ հարբում էին,  
Աղմկում էին հարսանիքների մեջ,  
Յե՛վ լաց էին լինում և՛ պարում էին,  
Ապրում էին աղքատ, անիմաստ ու խե՛ղճ...

Ահա նա իջավ ներքև. ուզում է մեկին կանչի.  
Հոգնած դարկեց մի դուռ, չեմքին կանգնեց խսկույն  
Մի վառվռո՛ւն, դեղեցի՛կ ու համարձակ աղջիկ,  
Զեռքում բռնած մի գիրք կոմունիզմի մասին.  
— Ո՞վ եք, ի՞նչ եք ուզում, վո՞րտեղից եք գալիս.  
— Յես ուզում եմ նրա՛նց, նրա՛նց, վորոնց տեսա,  
Վորոնք ծանոթ են ինձ, ճանաչում եմ մոտիկ,  
Զե՞՞ վոր գորքս մի որ այս աշխարհով անցավ:  
Ու Հելլադա դարձավ մերկ ու վոտաբորբիկ:

Զե՞՞ վոր չըջել եմ յես, յերբ ձմե՛ռ եր ու ց՛ուրա,  
Զգացե՛լ եմ, ապրե՛լ, ու տեսե՛լ եմ նրանց,  
Վորոնք հաղար ու մի հեքյաթներ ինձ ասին  
Այս լեռների բարձր դադաթների դիմաց...

— Լսի՛ր, լսի՛ր, ճամբորդ, դու հեքյաթ ես պատմում.  
Ու մի չչակ ճչաց կանաչ արտի կողքին,  
Աղջիկը ներս դնաց ու չքացավ անհետ,  
Ծուխ բարձրացավ դեպի կապուտակը հեռու,  
Խառնվեց Արագածի ճերմակ ամպերի հետ:



Մի ծիծեռնակ շատ մոտ ծղրտաց ու կանչեց,  
Ուշքի յեկա իսկույն ու ցնցվեցի հանկարծ,  
Կողքիս իմ ընկերը, իմ սիրելի Սեթին,  
Դեռ կարդում եր յերկար, խորատուլված, քաղցր,  
Թիկնած ծանրամարմին մի մամուռտած քարի,  
Վոչխարները արածում եյին ձորալանջին ընկած,  
Մըլը ծիծաղում եր, ինչպես մի ծաղիկ,  
Ամսերը պարում եյին Արաբածը դրկած,  
Իսկ ներքեում գյուղեր եյին ու խրճիթներ անթիվ,  
Մի նոր արեգակով ու կրակով վառված...

## ՄԻ ՓՈՔՐԻԿ ՊՈԵՄ

Մեր կալի մեջ բուրբակ,  
Կար մի կլոր թթի ծառ,  
Հարսի նման կորորաւ  
Հենց վոր դարունը կգար:

Յերբ վոր ձյունը հալչում եր,  
Ծաղկոտում եր դաշտ ու սար,  
Մայրս ինձի կանչում եր.  
— Այո ես ուլը արտը տար:

Ուլը առաջս արած  
Գնում եյի մեր կալը,  
Սինձ եյի քաղում ծառի տակ,  
Բարձրանում եյի ծառը:

Որորում եյի ծառը զիլ,  
Ծառից կանչում եյի—արի!,  
Կանչում եյի քյուրդ դրկից  
Հինգ տարեկան Լալարին:

Թուշը կարմիր թթի պես  
Կալ եր վազում Լալարը,  
Չարաճճի ծառի պես  
Քըջում եր մեր կալը:

Վոտքս դարկում եյի ծառին,  
Ծառից խըշում եր թութը,

Թուօ՛ք ելի թափում Լալարին,  
Թափում թթի կարկուտը:

Լալարիկը թրուլըռում,  
Բուռ եր անում թթերը,  
Նրա կողքից ֆլուֆլուում,  
Թուօ՛ք ելին փախցնում ծաերը:



Ապրում ելինք մենք ախպես  
Մենք միասին, մենք բա՛րի,  
Ամեն դարնան միշտ եսպես  
Թուօ՛ք ելի թափում Լալարին:

Բայց մի ուր ել յերբ ուրախ  
Թուօ՛ք յի թափում Լալարին,  
Մայրս կանչեց.— Կո՛ւի՛՛վ ե,  
Ծունկը ծեծեց.— Յա՛ծ արի՛:

Գրկեցի թթի մեծ ճյուղը,  
Լացով կալա մեր ծառին,  
Ծխում կորավ մեր գյուղը  
Ու լաց եղավ Լալարին:

Մայրս կապեց իր շալը  
Ինձ իր շալակը առավ,  
Ու մեր գյուղը, մեր կալը  
Արյո՛ւն, արցո՛ւնք, ծուխ դառավ:

Մորս մեջքից ծըռվեցի  
Հետ նայեցի Լալարին,  
Մըկկում եր չալ ուլս,  
Պո՛չը դարկում եր ծառին:

Լաց եր լինում Լալարը,  
Ու ճեռքով եր անում ինձ,  
Գոգում լցված կարմիր թուօ՛ք,  
Զեռքում բռնած մի փունջ սինձ:



Իմ սիրելի՛ Լալար ջան,  
Որդեն առել ենք հասակ,  
Մեծացել ենք մենք արդեն,  
Մըտել ենք վաչտ ու դասակ:

Մանուկ ելինք, մենք մանուկ,  
Յեկան նրանք ումբերով,  
Մեր սարերը ցնցեցին  
Ու գյուղ մտան խմբերով:

Ունեորի կրունկն եր  
Մեր դաշտերը տըրորում,  
Կապիտալն եր ումբերով  
Մեր սարերը ուրորում:

Ե՛լ չեմ կանչում քեզ ծառից  
Ե՛լ չեմ ասում—կալ ա՛րի,  
Տե՛ս, թափում եմ յերգերս,  
Քե՛զ կանչում եմ պայքարի:

Նրանք մեր գյուղը առան  
Կապիտալի զինքերով,—  
Մենք յերկրագունդը կառնենք  
Ինտերնացիոնալ յերգերով:

ՅԵՐԳԵՐ ԳՐԿԱԺ ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՄ

## ԱՏԱՂՁԱԳՈՐԾԸ

Ձմեռային պալատ, ներքնահարկ, նկուղ.  
Խորդուքորդ միջանցքով մտնում ես մի սենյակ,  
Անկյունում դրված է փայտյա մի հին թախտ,  
Պատից կախված է մրոտած մի լամպ:

Նա ներս է մտնում. կախում է սղոցը,  
Հագում է ցածրաձայն ու շուրջը չափում.  
— Ո՞վ է դարմանալի այս ատաղձագործը,  
Մտածում ես դու ու... սարսափում:

Փչում է լամպը. համրաքայլ ու լուռ  
Մտանում է թախտին: Հանգիստ է բաղը.  
Գրկում է վերմակը, հանում է բռն-բռն  
Իր ծոցում թեղած ուժանակը:

— Ահաբեկի՞չ է արդյոք սա, մի խենթ նարոդովու՞նց.  
Հանճարեղ մի հյո՞ւան, ընդհատակյա գործիչ  
Սը՛սս... բարձրանում է նա, նշմարելով քեզ  
Յեւ դու սարսափահար արձակում ես մի ճիչ:

— Խալոսերի՛ն... ու սեղմում է քո կոկորդը,  
Այդ բանիորը, հանճարեղ այդ ատաղձագործը,  
Յեւ քո աչքերի բերբերի վրա  
Թափում է իր աչքերից հոսող բոցը:

— Ե՛ր, հեռացի՛ր... փախի՛ր... չտապում եմ, տե՛ս  
Պալատը դըժաժ է դինամիտի վրա,  
Յես ամեն ոք այստեղ մտել եմ այսպես՝  
Իմ ձեռքերին սղոց և իմ ծոցում կրակ...

Յեվ ուրորվում է պալատը գլխիդ,  
Դու չուռ ես դալիս, բայց նա չկա...  
Պատին մնում է մի սղոց, մի լամպ,  
Անկյունում՝ փայտյա մի հին մահճակալ:

## ՊԵՏԵՐԳՈՖՈՒՍ

Խրվում են Փանտանները, բա՛րձր, բա՛րձր ցայտում,  
Շառաչում են ջրերի սպիտակ ծառերը.  
Հորեղոնից վերջին բոցն է ճառագայթում,  
Ծովի մեջ սուզվում է Ժանդոտած արևը:

Խաղաղ իրիկուն է. նայում է Յեկատերինան,  
Հանգիստ տարածվել է Բալտիական ծովը,  
Յեվ Բալտիկ է թվում Ռուսաստանը նրան.  
Բայց ի՞նչ, ապստամբությո՞ւն, ո՞վ, Պուգաչո՞վը:

Բառերը խեղդվում են, վորոտում է ծովը.  
Բալտիականը շառաչում է ու ափերին տալիս.  
— Ո, Թադուհի՛, լսի՛ր, Ռուսաստանը հուզվում է,  
Ռուսաստանը ուռչում է, ափերից դուրս է դալիս:

Հըռհըռում է ահից Թադուհին.  
Բայց ո՞վ է այդ Պուգաչովը, ո՞վ է,—  
Յեվ նրա աչքի դեմ պալատը ծովում է,  
Վորոտում, շառաչում է Բալտիական ծովը:

# Պ Ո Ե Տ Ը

(Պուշկին)

Այս պոետը, նստած այստեղ,  
Այս ալլեյում կանաչադարձ,  
Թիկն է տվել իր աթոռին  
Նայում է լուռ, ժպտում՝ հպարտ:

Թիկն է տվել, պղնձադույն  
Դեմքը սուղած հեռո՛ւ, հեռո՛ւ,  
Յեւ պատմում է կարծես մի բան,  
Յեւ ճակատն է կարծես քերում:

— Յես յեղել եմ այստեղ դերի,  
Յես յերգեր եմ այստեղ դերի,  
Այս ալլեյում չըջել եմ յես,  
Կարոտել եմ, լացել, սիրել:

Յեւ պատմում է, պատմում է նա  
Նստած այստեղ, այս ալլեյում,  
Սերունդներ են լսում նրան,  
Սերունդներ են դեմից քայլում:

Իսկ նա նորից նստած այստեղ,  
Այս ալլեյում կանաչադարձ,  
Թիկն է տվել իր աթոռին,  
Նայում է լուռ, ժպտում՝ հպարտ:

# Լ Ե Ն Ի Ն

„Да здравствует пролетарская  
революция во всем мире“

1917. 17/IV

Շողեչարժին վոտքը դրած,  
Ձեռքը թափով ողում խրած,  
Կանգնել է նա կայարանում,  
Շողեչարժին վոտքը դրած:

Դասակարգն է այդպես խոսում,  
Այդ Լենինն է — սիրտը դարի,  
Վոր տալիս է ազդանշան  
Ֆինլանդական կայարանից:

Հողմերի դեմ կանգնած արի,  
Ձեռքը թափով ողում խրած,  
Վողջունում է յերթը դարի,  
Շողեչարժին վոտքը դրած:

Արեգորեցի Պապու Մկրտչյան.

Հայ Գրեգորաֆի ապարան.

ԳլավիտաՆ 7545 (բ) Հրատ. № 2266 Պատվեր № 2184 Տիրաժ3000

Հանձնված է արտադրության 25 Հունիսի 1932 թ.  
Ստորագրված է տպագրելու 11 Ոգոստոս 1932 թ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0338328

ԳԻՆԸ՝ 90 ԿՈՊ.

26953

**Хачик Даштени**  
**КНИГА ПЕСЕН**

ГИЗ ССР Арменни, Эривань